



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԻԱՐԲԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՑՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ՅԻՍՈՒՆԵԻԶՈՐՐՈՐԴ

8 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1872



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ա. ՎԱՐԴԱՆԵԱՆԻ

—1872—

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ԲԱՑՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ԵՂ.

Ց Դ Ե Կ Տ Ե Մ Բ Ե Բ 1872

ՆՍԻՄԴԱՀ. — ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԻ

ՍՏԵՆԱՊԵՏ. — ԵՈՒՍՈՒԵԱՆ Տ. Լ.Ֆ. (Առժամանակեայ կարգեալ)

ԿԱՐԳ ԽՆԴՐՈՑ

- 1° Վաւերացումն նախորդ ատենադրութեանց :
- 2° Կողակ Վ.Ե.Ն. Կաթողիկոսի :
- 3° Ատենական Կանոնադրութիւն :
- 4° Կաթողիկոսական եւ Պատրիարքական յարաբերութիւնք :
- 5° Հարցումն ինն երեսփոխանաց :
- 6° Առաջարկութիւն տասն եւ եօթն երեսփոխանաց Սահմանադրութեան վերաքննութիւնը Յանձնաժողովոյ մը յանձնելու համար :

Ժողովոյ երեք Ատենապետները միանգամայն բացակայ լինելով Ատենադպիր Եռսուֆեան էֆ. Ժողովոյ կամաց համաձայն եւ Նախագահ Սրբազան Հօր հրաւիրանօք առժամանակեայ կերպով Ատենապետի ավտոն անցաւ, եւ ժամ ջին ատենը բացաւ 'ի ներկայութեան 42 երեսփոխանաց, որոց թիւը թէպէտ 32 ի հասաւ 'ի վերջէ, բայց եւ այնպէս ժողովը չկրցաւ մեծադոյն մաս գտնել :

Ատենապետ էֆէնտին օրուան կարգին չանցած՝ ծանոյց անձնական տկարութեան պատճառաւ բացակայ քանի մը երեսփոխանաց անուններն, որոց մէջ կը գտնուէր նաեւ երկրորդ Ատենապետ Տատեան էֆ. եւ երկու երեսփոխանաց նամակներ ներկայացոյց ժողովին, մին Շառլեան Յովհաննէս էֆ. ի կողմէ ուղղեալ, որ Սերաստիոյ վիճակին երեսփոխանութիւնը ընդունելով Տարէնտէի եւ Կիւրինի միացեալ վի-

ճակաց երեսփոխանութիւնէն կը հրաժարէր, եւ միւսը Կիւմիւշեան Յովհաննէս էֆ. ի կողմէ, որ թէ՛ Կեսարիոյ եւ թէ՛ Հալէպի ու միացեալ վիճակաց կողմէ միանգամայն երեսփոխան ընտրուած էր, եւ առանց եւ ո՛չ մէկ վիճակին ընտրութիւնը ընդունելու. կը հրաժարէր երեսփոխանական պաշտօնէ, կարեւոր պատճառ մը ունենալը յայտնելով :

Յետոյ Ատենապետ էֆ. Ժողովոյ ներկայացոյց Ազգ. Վարչութեան Խառն ժողովոյ մէկ պաշտօնագիրը, Աղթամարայ կաթողիկոսութեան խնդրոյն վերաբերեալ տեղեկագրով մը, եւ ընթերցաւ նոյն պաշտօնագիրը, որու ահաւասիկ պատճէնը :

Վսեմափայլ Ատենապետ

Ազգ. Ընդհանուր Ժողովոյ

Ազգ. Վարչութեան նախորդ Բաղ. Ժողովը

խոստացած ըլլալով ազգային Ընդհ. ժողովոյ ներկայացնել Աղթամարայ կաթուղիկոսական խնդիրը տեղեկագրով մը հանդերձ, արդի Արշալուծեան կրօնական եւ Քաղաքական Խառն ժողովս իւր մէջէն ընտրեալ Խառն Յանձնաժողով մը կարգեց, որ Աղթամարայ կաթուղիկոսական խնդրոյն վրայ տեղեկագիր մը պատրաստեց, զոր ամբողջ Աղշ. Ընդհ. ժողովոյդ կը ներկայացնեմք:

Թէեւ պատկառելի ժողովք 1870 յունվար 23ի նիստին մէջ՝ Աղթամարայ խնդիրը Եկեղեցական Համադոււմար ժողովոյ անօրինութեանը յանձնել որոշած էր, բայց այդ որոշումը մինչեւ ցարդ անզործադրելի մնացած ըլլալով, Աղշ. Արշալուծեան Խառն ժողովս հարկ համարեց այս մասին պատճառելի Ընդհ. ժողովոյդ նախնի ու վերջնական որոշումը ստանալ:

- 7 դեկտ. 1872 Նախագահ
 Ի Պատր. Հայոց Աղշ. Արշ. Խառն ժողովոյ
 Կ. Պօլիս Գ. Կ. ԽՐԻՄԵԱՆ
 Ի շիմաց կրօնական ժողովոյ
 Արեւադէր Արեւադէր
 Մ. Ա. ԻՅԱԿՈՒԵԱՆ ԹԱԿԵՈՍ ԵՊԻՍԿՈՍՈՍ
 Ի զիմաց Քաղաքական ժողովոյ
 Արեւադէր Արեւադէր
 Ս. Պ. Պ. ՓԱՓԱՋԵԱՆ Ս. Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ.— Աղթամարայ կաթուղիկոսական խնդրոյն նկատմամբ Խառն ժողովոյ կողմէ ներկայացեալ տեղեկագիրը, յայտնի է որ ըստ օրինի խնդրոց կարող կանցնի եւ յառաջիկայ նիստին կը ներկայանայ ժողովոյն: Բաց ասկէ ուրիշ ամենակարեւոր խնդիր մ'ալ եկած է ժողովոյն, որ ո'չ նուազ ուշադրութեան արժանի է: Բերայի մեր ազգային զերեզմանատան խնդրոյն նկատմամբ բազմատորադիր հանրագիր մ'եկած է զաւառացի ազգայնոց կողմէ:

— Աւելնող ժողովրդեան մէջէն ձայներ.—
 ո՛չ, այդ հանրագիրը միայն զաւառացի ազգայնոց կողմէն չէ, այլ ընդհանուր Ազգինն է:

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ.— Ինչ որ է, Դիւանը պարտ կը համարի նոյն ժողովրդական հանրագիրը յանձնել Աղզ. Արշալուծեան, որպէս զի խնդիրը քննէ եւ տեղեկագիր մը տայ Ընդհանուր ժողովոյն:

Ատենապետ էֆ. ի այս յայտարարութեան դէմ ունկնդիր ժողովուրդը կրկին ձայն բարձրացնելով բողոք կը բառնայ. իսկ Ատենապետ էֆ. զիտեղ տալով որ իւր խօսքը զիւանական

կանոնաց համաձայն է եւ թէ ունկնդիր ժողովուրդեան չարտականիք ժողովոյ գործոց միջամբանէ, կը հրաւիրէ զայն ատենական բարեկարգութիւնն անվրդով պահելու, եւ լսին ունկնդիր լինելու:

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ.— Քանի որ ժողովը մեծագոյն մաս չունի եւ չկրնար այդ մասին որոշում մ'ընել, աւելորդ է ուրեմն ժողովրդական հանրագիրը Աղզ. Արշալուծեան ղրկելու համար Ատենապետ էֆ. ի ըրած յայտարարութիւնը:

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ.— Կարծեմ թէ Ատենապետ օրինաւորութեան համաձայն շարժեցաւ, եւ չէ թէ ժողովոյն կողմէ, այլ յանուն Դիւանի յայտարարեց թէ պարտաւոր է հանրագիրը Աղզ. Արշալուծեան ղրկել, անոր կարծիքն ու պէտք եղած տեղեկութիւններն ստանալու համար, առանց որոյ Ընդհ. ժողովը չի կրնար պարտապաշտօնը անօրինել:

Աւելնող ժողովրդեան մէջէն ոմանք հանրագիրը ետ կուզեն, աւարկելով թէ՛ իրենք կրնան զայն Աղզ. Արշալուծեան տանիլ: Ատենապետ էֆ. ին զանոնք օրինապահութեան կը հրաւիրէ, յայտարարելով թէ ամեն երեսփոխանական վարչութեանց մէջ ժողովուրդը իրաւունք ունի Աղզ. Ընդհ. ժողովոյ հանրագիր մատուցանել, բայց երբէ՛ք իրաւունք չունի անմիջական պատասխան պահանջել, խնդիրը ո'րչափ ստիպողական ալ որ ըլլայ, Սահայն ձայները կը շարունակին, Պէկեան եւ Քիւրքճիպաշեան էֆ. ները Դիւանին ընթացքին դէմ բարձրաձայն կը գանդատին, ժողովին մէջ շուկը կը ծաւալի հետզհետէ եւ տեսանք ազմկալից վիճակ մ'առնելով Ատենապետ էֆ. կը տրամադրուի ատենանը գոցելու, գանդատելով Պէկեան եւ Քիւրքճիպաշեան էֆ. ներու դէմ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.— Չէ՛ք կրնար, Ատենապետ էֆ. առանց ժողովոյն կամբը ստանալու ատենանը գոցել:

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ.— Կը հարցնեմ ժողովոյն թէ հանրագիրը բերողները իրաւունք ունին այսպէս միջամտութիւններ ընելու եւ ժողովին հետ այս եղանակաւ բանակցութեան մասնելով պատասխան ստանալու:

Ժողովն այս հարցման բացասական պատասխան կուտայ, եւ ասկայն ունկնդիր ժողովրդեան մէջէն շուկը վերստին կսկսի եւ հանրագիրը ետ կը պահանջուի ստիպանօք:

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱՋԱՆ.— (Առ ժողովուրդն ուղղելով խօսքը) Դո՛ւք միայն հանրագիր բերելու իրաւունք ունիք, եւ ձեր այդ իրաւունքը դործադրեցիք, բայց անկէ անդին անցնել, ժողովոյ գործին միջամտել ձեր իրաւունքը չէ: Սահայն զձեզ վստահացնելու համար՝ իրբեւ Հայոց Պատրիարք կը յայտարարեմ անաւասիկ Սեմանեան կայսրութեան եւ Հայոց ազդին առաջ թէ մեզի համար զերեզմանատան խնդիր չկայ, այն զերեզմանատունը Հայոց ազգին սեպականութիւնն է եւ պիտի մնայ անշուշտ, քանի որ Հայոց ազգը կայ:

Նախագահ Սրբազանի այս յայտարարութեան վրայ՝ ունկնդիր ժողովուրդը խնդագիրն կը ծափահարէ եւ Պատր. Փոխանորդ Հայրը զիտեղ կուտայ թէ եկեղեցւոյ մէջ ծափահարել անպատեհ է:

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ.— Սրբազան Հայր, թէեւ Ձեր Սրբազնութիւնը իւր զաւակաց՝ որք մերկղարքն են, խառնած սրտերը հանդարտեցնելու համար այս յայտարարութիւնը ըրաւ, բայց ներքեջ ինձ յայտնել թէ անոնց ընթացքը հակասահմանադրական էր, եւ իրաւունք չունէին բնաւ ժողովէն անպատճառ բացստորութիւն առնելու, որու դէմ պարտք կը համարեմ բողոքել թէ՛ իրբեւ Ատենապետ եւ թէ՛ իրբեւ երեսփոխան:

Օրը տարածամած լինելով երեսփոխաններէն ոմանք կառաջարկեն որ ատենանը վերջանայ առանց ուրիշ խնդիր յուղուելու, եւ յետ ութ աւուր ժողովը զուժարուի վերստին. իսկ ոմանք կառաջարկեն օրուան կարգին անցնելով մինչեւ որոշեալ ժամէ շարունակել ատենանը, այս երկու հակառակ կարծեսց առջեւ Ատենապետ էֆ. ին ժողովոյ կամաց կը զիմէ, եւ ժողովը իւր քուէով կորոշէ մինչեւ ժամ 10 շարունակել նիստը, հետեւապէս Ատենապետ էֆ. ին օրուան կարգին կանցնի:

ՎԱԻՆԲԱՅՈՒՄՆ ՆԱԽՈՐԴ ԱՍԵՆԱՊԵՏՈՒԹԵԱՆՑ

Ատենապետ էֆ. 39ք նիստի ատենադրութիւնը ժողովոյ զիտողութեան կենթարկէ, ասկայն որ եւ է զիտողութիւն տեղի չունենալով 40ք նիստի ատենադրութեան վրայ երեսփոխանաց զիտողութիւնը կուղէ:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ.— Որովհետեւ ժողովը մեծագոյն մաս չունենալուն՝ չկրնար այսօր ատենադրութիւններն վաւերացնել, եւ յաջորդ նիստի մը մէջ երբ վաւերացման ենթարկին, նոր ի նորոյ զիտողութիւններ տեղի պիտի ունենան այսօր բացակայ գանուող երեսփոխանաց կողմէ, կառաջարկեմ որ րեւմն որ ատենադրութեանց խնդիրն ուրիշ նիստի թողուի, եւ ժողովն օրուան կարգին յաջորդ խնդրոյն վիճաբանութեամբն զբաղի:

Տ. ԱՄԲՐՈՍԻՈՍ ՎԱՐԴ.— Կը կրկնեմ: ԻՓէկձԵԱՆ Հ. ԷՖ.— Քանի որ ժամանակը խիստ ուշ է եւ միջոց չկայ ուրիշ խնդրով բարձրելու, լաւագոյն է հիմայ ատենադրութիւնները ժողովոյ զիտողութեան ենթարկել, եւ վաւերացումը ուրիշ նիստի թողուլ:

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ.— Օրուան կարգին մէջ ատենադրութեան վաւերացման խնդրոյն կը յաջորդէ Վեհ. կաթուղիկոսի կոնդակի խնդիրը, որուն համար անցեալ մտքամ ըսուեցաւ արդէն թէ ամբողջ նիստ մը պէտք է զայն վերջացնելու համար, Չեմ կարծեմ որ հիմա ժողովոյ այս սուղ միջոցին մէջ կարելի լինի վիճաբանութիւնը շարունակելով վերջ մը տալ խնդրոյն, ուստի լաւաւ լոյն կթուի ինձ զայն վերապահել յաջորդ նիստին եւ ատենադրութեանց քննութեան զբաղիլ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.— Անցեալ անգամ Վեհ. կաթուղիկոսի կոնդակի խնդիրն իւր որոշման ժամեցած էր, բայց Ատենապետ էֆ. զայն ետ թողուց առարկելով թէ հասունցած չէ, եւ թէ՛ քաղաքական կողմեր ունի այն խնդիրը, որոնք խորին ուշադրութեան կը կարօտին: Փախաքննի էր որ Ստեան էֆէնտին ինք այսօր ամէն երեսփոխանէ առաջ ներկայ գանուէր ժողովոյն, եւ լուր ներկայութեան յուղուէր խնդիրը. բայց զժբաղղաբար բացակայ գտնուեցաւ, եւ ասկայն այս բացակայութիւնը ժողովը շարժելու որ նոյն խնդիրը չյուղէ եւ խօսելու տրամադրեալ երեսփոխանաց ձայնը չ'լսէ:

ԻՓէկձԵԱՆ Հ. ԷՖ.— Ես այս առաջարկութեան դէմ ընդդիմութիւն մը չունիմ, եւ իմա ետ կանուամ:

Ատենապետ էֆէնտին այս մասին ժողովոյ կամաց կը զիմէ, եւ ժողովը հինգ հակառակ քուէի դէմ կորոշէ նախորդ ատենադրութեանց վաւերացման խնդիրը թողուլ: Եւ անց իջ յաջորդ խնդրոյն:

2 ԿՈՆՎԱՅՆ ՎԵՆՆԻՆՆԻ ԿՈՄՊՈՂԻՏԻՆ

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ.— Քանի մը ամիսէ հետէ Վ.Ե.Ն. Կաթիլիկոսը կոնգակ մը զրկած է եւ ընդհ. ժողովը զայն իւր ուշադրութեան նիւթ բրածու ճշմարտար խօսելով ցաւալի է որ ժողովը ցարդ այս մտայն որոշում մը չէ կրցած ընել, եւ սակայն խնդիրն երկարաձգուած լինելուն համար՝ հիմայ հաղձեալով որոշում մը տալն ալ քննասկար կը գտնեմ, եւ Օտեան էֆէնտի կարծեաց համարձակ կըսեմ թէ հարկ է լրջարար խորհիլ, վիճարանիլ եւ այնպէս օրինաւոր լուծում մը տալ խնդրոյն :

ԻՓԵՎՃԵԱՆ Է. ԷՖ.— Վ.Ե.Ն. Կաթիլիկոսի կոնգակին խնդրոյն վրայ խօսք ունիմ եւ կախաւ պատրաստած եմ զայն, սակայն անկեղծօրէն կը խոստովանիմ թէ շատ երկար է : Ա՛յնքան այս խնդիրը ծանրութիւն ստացաւ, այնքան կարեւորութիւն գտաւ որ անդրմելի պարտք մը համարեցի ինձ անպատրուակ յայտնել ինչ որ գիտեմ այս մասին : Եթէ ժողովը թոյլ տայ խօսիլ այնքան որքան կը ներէ ժողովոյ ժամանակը, եւ խօսքիս մնացորդը յաջորդ նիստին մէջ շարունակել, պատշաճ եմ խօսելու :

Վ.Ե.Ն. Կաթիլիկոսի կոնգակին վրայ խօսելէս առաջ ուրիշ պարտք ունիմ կատարելիք, այսինքն՝ նախ այն հանգամանքներուն վրայ իմ կարծիքս յայտնել, որք կրնան կոնգակին վրայ ազդեցութիւն ունեցած ըլլալ : Ասի կոնգակին քննութիւնն ալ կը զիրայնէ : Կը տեսնէք որ ուղղակի կոնգակի քննութիւնէն չպիտի սկսիմ, եթէ կը ներէք շարունակեմ խօսքս :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Դ՛ո՛ւք, ատենաբան էֆէնտի շարունակեցէք ձեր խօսքը, եւ եթէ բուն խնդրէն դարտուղիք, այն ատեն հաւասար երկրք Ատենապետին ինքնին կազդարարէ ձեզ խնդրոյն սահմանը գառնալու :

Յորմէ հետէ պատիւ ունիմ ժողովոյս մէջ գտնուելու՝ ջանացեր եմ միշտ որչափ կարելի է կարծ խօսիլ : Իսկ այսօր խնդրոյն ծանրութիւնը կը հարկադրէ իս աւելի երկար ուշադրութիւն եւ համարութիւն խնդրել ձեռնէ :

« Լսուելու արժանի ըլլալու համար՝ խօսքը մտքի, միտքն ալ միայն ճշմարտութեան համար ՚ի գործ գնելու է » կըսէ իմաստուն մը, Այն պայմանը զոր իմաստունը կը պահանջէ, չեմ մոռցած երբէք, ո՛չ հոս եւ ո՛չ ՚ի Ռուսաստան, վատան եղիք, Տեա՛րք, որ այսօր ալ չպիտի չեղիմ անկէ : Գիտեմ թէ այդ վե՛սեմ պայմանին

համաձայն խօսիլը շատ տեղ եւ շատ անգամ շնասկար հետեւանք կուենայ խօսողին համար, բայց այսու ամենայնիւ ո՛չ կրբէք որ եւ է ազգային խնդրոց մէջ համոզմանցս հակառակ վարուած եմ անձնական շահու կամ շնասու նրկատու մեքէ շարժեալ, ո՛չ ալ այսօր այդ վատութիւնը յանձն կառնում, ո՛վ որ կարող է ասոր հակառակն ապացուցանել, թո՛ղ փաստերն ՚ի ձեռին հրատարակ ելլէ եւ ամօթահար ընէ իս, եթէ ո՛չ՝ իր ըրածը ծաղու եւ արհամարհանաց արժանի՝ զրպարտութիւն կ'ըլլայ : Հող չէ՛, մենք այդ զրպարտութեանց բողէն անցած եմք արդէն ՚ի Ռուսաստան, ընդհանրապէս Հայութեան եւ մասնաւորապէս Էջմիածնի Աթոսոյն իրաւունքը պաշտպանելուս համար : Անդ « Էջմիածնէնք արդէն թէ ազգային իրաւունքներ պաշտպանելու համար զրպարտուելու, հալածուելու եւ կեանքն իսկ վտանգի մէջ գնելու է. անդ « Էջմիածնէնք արդէն թէ վառամոլութեան եւ շահախնդրութեան կիրքեր յազեցնելու համար քողաքականութեան գործիք եւ կայսրութեան գաւաճան ըլլալու է :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— (Ընդհանրապէս) Կազդարարեմ ձեզ որ այդ խօսքերը խնդրէն դուրս են :

Քանի մը նստարաններէ.— Միթէ խնդրոյն վրայ պիտի խօսի թէ ո՛չ պատմութիւն պիտի կարգայ :

ԻՓԵՎՃԵԱՆ Է. ԷՖ.— Խօսքերուս եւ ո՛չ մէկ նշանախնցէն կը բաժնուիմ եւ եթէ պնդեն ասոր համար կը լսեմ : Կզգամ որ Դիւանը իւր պարտքը կը կատարէ, բայց ես ալ իբր երեսփոխան կը ճանչնամ իրաւունքս :

ՊԵՎՃԵԱՆ Ք. ԷՖ.— Մ'արդելուք, Ատենապետ էֆ. թողէք որ ատենաբանը խօսի, կարելի է բուն խնդրոյն գառնայ հիմա :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Կազգայեմ, Պէկեան էֆ. Դիւանին գործոց մի՛ միջամտէք, Երբ ատենաբան մը խնդրէն շեղի, Ատենապետը իրաւունք ունի ազդարարելու եւ ՚ի հարկին ՚ի կարգ հրաւիրելու զայն :

ԻՓԵՎՃԵԱՆ ԷՖ.— (Շարունակելով ինչպէս ըրած է) Բայց մե՛ծ եղաւ զարմանքնիս երբ Պոլիս եկանք եւ տեսանք թէ այն քաղաքականութիւնն, որ Էջմիածնի Աթոսին իրաւունքները պաշտպանողները կը հալածէ ՚ի Ռուսաստան, « Դո՛ւ յոյն Աթոսին ինչպէ կը հաչակէ զանոնք, »

եւ այն անձինքը զորս ուրիշ միջոցներով կարող չէ գրաւել, անուանարկել կը ճշնի, որպէս զի անոնց ձայնը ազդեցութիւն չունենայ ժողովրդին վրայ :

Ես ՚ի Ռուսաստան ծնած եմ, Տեա՛րք, եւ մինչեւ 1868ը անդ ապրած՝ կը սիրեմ Ռուսաց լեզուն ու գրականութիւնը եւ երախտապարտ եմ անոնց, կը սիրեմ եւ կը յարդեմ Ռուսաց ճշմարտապէս լուսաւորեալ մասը, որ զերծ է ամէն նեղսիրտ ազգային նախապաշարութեան, եւ գիտէ յարգել այլոց ազգային զգացումներն ու համոզումները : Բայց այս անձնական համակրութիւնները չեն կարող արգելք ըլլալ ինձ մեր Ռուսաբնակ ազգայնոց « Էջմիածնէնք » վիճակը ներկայացնել Ձեզ համառօտիւ եւ այն օտար ազդեցութեան վրայ, որ միշտ մեր ազգային միութեան եւ անկախութեան կսպառնայ իմ զիտցածներս ըսել :

Մինչեւ վերջին Արեւելեան պատերազմը ընդհանրապէս Ռուսիոյ բնակչաց եւ մասնաւորապէս Հայոցս վիճակը նախանձեցի վիճակ մը չէր : Բայց անուրանալի եւ այն թէ 1860 էն սողին՝ շատ նշանաւոր կարգադրութիւնք եւ վերանորոգութիւնք եղան յօշուտ ժողովրդեան, եւ այժմ որպէս բոլոր ժողովրդոց, նոյնպէս եւ Հայուն կեանքը, պատիւն ու ստացուածքը ապահով են՝ օրինաց գործադրութեան շնորհիւր, Հայը իբրեւ Ռուսիոյ հպատակ տիրապետող ազգին հետ հաւասար կը վայելէ օրինաց պաշտպանութիւնը, Եթէ կան թերութիւններ, եթէ կան արգելքներ ըբրեւ մարդ աւելի յառաջադիմելու, լուսաւորելու եւ քաղաքակրթուելու, միայն Հայոց համար չեն, այլ Ռուսիոյ սահմաններուն մէջ գտնուող բոլոր ազգաց ալ կը վերաբերին : Բայց անհերքելի է եւ այն թէ Ռուսիոյ հայուն վիճակը Էջմիածնէն շատ հետու է այն վիճակէն, զոր իբրեւ Ռուսիոյ հոգաբարձ կը վայելէ : Այս պատճառաւ էր որ 1863ին, Ռուսաց ազատամիտ թերթերէն մէկը հետեւեալ կարճ, բայց նշանաւոր խորհրդածութիւնք ըրած էր « Թամանակ մը Տաճկաստանի Հայերը իրենց Ռուսիաբնակ եղբարդ կը նախանձէին, իսկ այժմ ատոնք պիտի նախանձին իրենց Տաճկաստանցի եղբարդ, որք Օսմանեան տէրութենէն Սահմանադրութիւն ստացած են իրենց ազգային գործերը ազատօրէն կարգադրելու համար » : (Այս ազնիւ թերթը չը համարձակեցաւ ուրիշ անգամ նոյն նիւթին վրայ բերան բանալու)

Հայը շատ հանգիստ է Ռուսիոյ մէջ, եթէ իր

ազդութեան եւ ազգային իրաւանց վրայ չլսօսի, եթէ իր ազգային լեզուն եւ դպրոցները չը պաշտպանէ, եթէ « Էջմիածնէնք » ազգային եկեղեցւոյ առաւելութիւնները չքարոզէ : Սակայն ինչպէս ամեն տեղ եւ ամեն ժամանակ, Ռուսիոյ մէջ ալ կը գտնուին Հայեր որ կամին լուսաւորուիլ, քաղաքակրթուիլ, օրինաց պաշտպանութիւն վայելել եւ այս բարեաց համար երախտապարտ իսկ ըլլալ, բայց իրենց ընատուր ազգային կերպարանքն ալ չեն կամիր կորուսանել, որ բարբորոտական դարերու ճիրաններէն ազատելով իր գոյութիւնը պահպաներ է մինչեւ այս դարս : Յայտնի է ամեն անոնց որ միտք ունին տեսանին եւ լսածնին իմաստասիրելու, թէ Ռուսիոյ տէրութիւնը կը պահանջէ որ Հայը գո՛ւ ըլլայ իբրեւ հպատակ իր ունեցածներէն եւ իր « Էջմիածնէնք » քաղաքականութեան զոնէ, քաղաքականութիւն մը, որուն նպատակն է Ռուսիոյ սահմանաց մէջ գտնուած բոլոր ազգերը ՚ի մի ձուլել, եւ որուն գլխաւոր միջոցներն են կրօնքն ու լեզուն :

ՊԵՎՃԵԱՆ Ք. ԷՖ.— (Ընդհանրապէս) Թամէ արդ կարծեմ որ Դիւանը ազդարարէ, ատենաբան էֆ. առանց փաստեր մէջ բերելու գրական կերպով ալ եւ այլ զիտումներ եւ տրամադրութիւններ կը վերադրէ տէրութեանց :

Տ. ՅՈՎՃԱՆՆԵՍ ՔՆՅ. ՄԿՐԵԱՆ.— Եթէ այս տեսակ խօսքեր ներելի չէ խօսիլ հոս, ուրեմն ընդհ. ժողովոյ նիստերը պէտք է դադարակ տեղի ունենան եւ ատենադրութիւններն ՚ի լոյս չեղնեն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Դիւանը իւր պարտաւորութիւնը գիտէ կատարել, կը խնդրեմ որ անոր պաշտօնը ուրիշները չտանձնեն :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ.— Տէրութեան մը դէմ խօսողը մէկ անձ մ'է թէ եւ բայց ամբողջ երեսփոխանութեան բերանը եղած կը կարծուի :

ԻՓԵՎՃԵԱՆ Է. ԷՖ.— Անոնք որ ազատութիւն չունին իրենց զիտցածը խօսելու կը գիմադրեն, բայց ես ինչ որ գիտեմ իմ ազգիս եկեղեցւոյն նկատմամբ, պարտաւորութիւն կզգամ ինձ խօսիլ, թէ եւ անքաղաքակրթութիւն մ'ալ ըրած լինիմ : (Կը շարունակէ ընթերցումը) Անկեղծօրէն կըսեմ, տեա՛րք իմ, եթէ Ռուսիոյ քաղաքականութեան այդ պահանջումը գիտութեան երեւան հանած օրէնքներուն համաձայն ըլլար, անմիջապէս իր քաղաքականութեան կողմը կանցնէի, եւ իմովանն կաշխատէի համոզել ազգակիցներս թէ աւելի լաւ է քաղաք

ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՍՆՏՈՒԿԻՆ

Կը ծախու ի ի Դիւանատան Պատրիարքարանի և կը դանու ի
Եկեղեցեաց բանկալները :